

Դուք ակտիվ և նպատակամղված երիտասարդ բժիշկ-ստոմատոլոգ եք: Ինչպիսի՞ գիտելիքներ և հմտություններ են անհրաժեշտ ձեր աշխատանքային ուղին հնարավորինս արագ և արդյունավետ սկսելու համար.

▶ արակտիկ փորձ.

Դուք հնարավորություն եք ստանալու կիրառել ձեր գիտելիքները՝ փորձառու մասնագետների աջակցությամբ՝ մասնակցելով ատամնաբուժական կոնկրետ աշխատանքների.

▶ անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ և ուսումնասիրություններ.

Ձեր փորձը հիմնված է լինելու անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների վրա, իսկ ուսումնասիրությունների համար կարող եք օգտվել մեր եզակի ստոմատոլոգիական գրադարանից - <https://whitecastle.am/hy/isd-library-am/> .

▶ անհրաժեշտ ոչ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ.

Ձեր գալիք աշխատանքային և բիզնես հաջողությունների արագացմանը կնպաստեն գործարար անգլերենի, արդյունավետ հաղորդակցության, թիմային աշխատանքի, կառավարման և այլ վճռորոշ ոչ մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները.

▶ խորհուրդներ փորձառու մասնագետներից և հաջողակ ձեռներեցներից.

Մասնագիտական հարցերից մինչև կարիերայի կառուցում ու սեփական ստոմատոլոգիական բիզնես՝ Ալեսի Ստոմատոլոգիական Դպրոցի լոկալ և միջազգային դասախոսներն ու համայնքի մասնակիցները պատրաստ են աջակցել ձեզ.

▶ մասնագիտական և գործարար կապեր.

Դուք հնարավորություն եք ստանալու մասնակցել Ալեսի Ստոմատոլոգիական Դպրոցի ու համայնքի միջոցառումներին (թե բաց, թե ոչ հրապարակային) և թիմային աշխատանքներին՝ կառուցելու նոր բարեկամություններ և արժեքավոր գործարար կապեր.

● Ի՞նչ է անհրաժեշտ Ալեսի Ստոմատոլոգիական Դպրոցում ուսանելու համար.

✓ մասնագիտական բազային գիտելիքներ (ստոմատոլոգիական ֆակուլտետի 4-րդ կուրս և բարձր մակարդակի),

✓ ոչ մասնագիտական բազային գիտելիքներ (հատկապես ողջունելի կլինեն՝ գործարար անգլերեն, համակարգչային [օր.՝ ներկայացումներ, սոց ցանցերի գործարար կիրառում], կամավորական կամ ստաժորական փորձառություն),

✓ խանդավառություն և ձեր գալիք հաջողությունների համար քրտնաջան աշխատելու կարևորության գիտակցում:

● Անհրաժեշտ մանրամասներ.

✓ դասընթացի մասնագիտական և այլ անհրաժեշտ թեմատիկ գիտելիքներ - <https://whitecastle.am/hy/topics/>.

✓ լոկալ և միջազգային դասախոսներ ու աջակիցներ - <https://whitecastle.am/hy/lectures/>.

✓ տևողություն՝ 8 ամիս (առաջին կիսամյակ՝ սեպտեմբեր – դեկտեմբեր, երկրորդ կիսամյակ՝ փետրվար – մայիս).

✓ դասերը տեղի են ունենում շաբաթական երկու անգամ՝ 09.00-20.00 միջակայքում (ճկուն գրաֆիկ՝ հաշվի առնելով իրականացվելիք աշխատանքների և միջոցառումների բնույթը).

✓ ընդունելության քննություններ՝ օգոստոս – սեպտեմբեր ամիսների ընթացքում.

✓ ընդունելության քննությունները բաղկացած են 2 հիմնական փուլից՝ դիմում և ճանաչողական հարցազրույց.

✓ դասերը հիմնականում տեղի են ունենում Սպիտակ Ամրոց ատամնաբուժական կլինիկայում.

- Ալեսի Ստոմատոլոգիական Դպրոցում ուսուցումը վճարովի է. դասընթացի ողջ տևողության համար այն կազմում է 550,000 ՀՀ դրամ:

Դասընթացի կազմակերպիչ «Ստոմատոլոգիական Տուրիզմ Դեպի Հայաստան» հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է. գումարը օգտագործվում է հիմնականում զարգացման նախագծերի իրականացման և դասախոսությունների հետ կապված ծախսերի համար:

● ԱյլսԴի Ստոմատոլոգիական Դպրոցի 2021-2022թթ. ընդունելության առաջին փուլին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև սեպտեմբերի 2-ի ժամը 18.00-ն լրացնել այս առցանց դիմումը - <https://docs.google.com/.../1uSi9F3c7uOEBMrH7fqEc3rMrLMS.../> .

Հարգանքով,  
Այ-Էս-Դի Ստոմատոլոգիական Դպրոցի թիմ  
<https://www.whitecastle.am/>